ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«12» հոկտեմբերի 2022թ. N ԱՄ/612-Ձև

ք. Արմավիր

«ՁԱՐԹՈՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԵԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՌԻՄԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 26-ի N1484-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի զեկուցագիրը, երկամսյա վարժական հավաքներին մասնակցելու նպատակով.

ո ր ո շ ու մ ե մ՝

1. «Ձարթոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարեկ Մելքոնյանին 2022 թվականի հոկտեմբերի 7-ից նոյեմբերի 22-ը ներառյալ ժամանակավորապես ազատել աշխատանքային պարտականությունների կատարումից՝ պահպանելով աշխատատեղը (պաշտոնը):
2. «Ձարթոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի բացակայության ժամանակահատվածում պարտականությունների կատարումը 2022 թվականի հոկտեմբերի 7-ից նոյեմբերի 22-ը ներառյալ վերապահել նույն դպրոցի տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Ռիմա Աբովյանին:
3. 2022 թվականի հոկտեմբերի 7-ից նոյեմբերի 22-ը ներառյալ «Ձարթոնքի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Ռիմա Աբովյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և տարածվում է 2022 թվականի հոկտեմբերի 7-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 12.10.2022 10:37:38 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ